ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ԴԵԿՏԵՄԲԵՐ 2005)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
«ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի
«Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է
մակրոտնտեսական, հարկաբյուջետային, դրամավարկային,
ինչպես նաև ՀՀ վճարահաշվարկային, բանկային համակարգի
հիմնական ցուցանիշների և տնտեսական նորմատիվների
վերաբերյալ տեղեկատվություն:
Մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ
տեղեկատվության աղբյուրը
ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է,
իսկ հարկաբյուջետային, դրամավարկային և բանկային
վիճակագրության տվյալների աղբյուրը՝
ՀՀ կենտրոնական բանկը:
Դրամավարկային և բանկային վիճակագրությունում ընդգրկված է
ՀՀ միջազգային պահուստների, փողի ագրեգատների,
ֆինանսական շուկայի և փոխարժեքների վերաբերյալ
տեղեկատվություն:

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ
տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է.

http:// www.CBA.am

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Տնտեսական աճ

2005 թ. հունվար-դեկտեմբերին տնտեսական աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 13.9%: ՀՆԱ աճը հիմնականում պայմանավորվել է շինարարության (ազդեցությունը ՀՆԱ աճի վրա կազմել է 5.4 տոկոսային կետ), ծառայությունների (3.7) և գյուղատնտեսության (2.5) աճով:

ՀՆԱ դեֆլյատորը 2005 թ. հունվար-դեկտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 103.1%:

Գնաճ

Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2005 թ. դեկտեմբերին գրանցվել է սպառողական գների ընդհանուր մակարդակի 2.3%-ով աճ, ընդ որում՝ պարենային ապրանքների, ոչ պարենային ապրանքների և ծառայությունների նպաստումը գնաճին կազմել է համապատասխանաբար 2.3, -0.03 և -0.02 տոկոսային կետ:

2004 թ. դեկտեմբերի համեմատությամբ սպառողական գների անկումը կազմել է 0.2%: 2005 թ. հունվար-դեկտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, սպառողական գների ինդեքսը կազմել է 100.6%:

Բնականոն գնաճը 2005 թ. դեկտեմբերին, նախորդ ամսվա համեմատությամբ, կազմել է 0.29%, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատությամբ՝ 0.52%, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ՝ 0.56%:

Արտաքին հատված

2005 թ. հունվար-դեկտեմբերին ապրանքների արտահանման արժեքը (ՖՕԲ գներով) կազմել է 950.4 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելանալով 31.5%-ով: Արտահանման աճը հիմնականում պայմանավորված էր արտահանման մեջ 33.2% կազմող «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», 35.4% կազմող «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և 10.2% կազմող «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերի արտահանման ծավալների համապատասխանաբար 129.1%, 12.4% և 39.7% աճով: Առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալները հաշվի առնելու՝ արտահանումն ավելացել է 44.9%-ով:

Ներմուծման արժեքը (ՍԻՖ գներով) կազմել է 1767.9 մլն ԱՄՆ դոլար՝ 30.9%-ով ավելանալով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ: Առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ներմուծման ծավալները հաշվի առնելու՝ ներմուծումն ավելացել է 34.1%-ով: Ներմուծման աճը հիմնականում պայմանավորվել է ներմուծման մեջ 12.8% կազմող «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», 16.7% կազմող «Հանքահումքային արտադրանք», 19.7% կազմող «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և 8.3% կազմող «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի ներմուծման ծավալների համապատասխանաբար 67.5%, 40.9%, 19.2% և 57.7% աճով:

Արդյունքում, 2005 թ. հունվար-դեկտեմբերին առևտրային հաշվեկշռի պակասուրդը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, ավելացել է 30.2%-ով (առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի՝ 26.9%-ով) և կազմել 817.6 մլն ԱՄՆ դոլար:

Պետական հատված

Դեկտեմբերին արձանագրվել է պետական բյուջեի՝ ծրագրված ցուցանիշների համեմատությամբ բարձր կատարողական: Պետական բյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները կազմել են 46.5 մլրդ դրամ՝ ծրագրված 42.9 մլրդ դրամի փոխարեն, որտեղ հարկային եկամուտները կազմել են 34.9 մլրդ դրամ (ծրագրային՝ 34.3 մլրդ դրամ), իսկ ոչ հարկային և կապիտալ եկամուտները գերակատարվել են 3.0 մլրդ դրամով և կազ-

մել 5.1 մլրդ դրամ: Դրամաշնորհները կազմել են 6.5 մլրդ դրամ (ծրագրային՝ 6.7 մլրդ դրամ): Ամսվա հարկային եկամուտների միջին օրական մուտքերը կազմել են 1.6 մլրդ դրամ՝ ինը ամիսների միջին 1.1 մլրդ դրամի, հոկտեմբերի միջին 1.3 մլրդ դրամի և նոյեմբերի միջին 1.5 մլրդ դրամի փոխարեն:

Բյուջեի ծախսերը դեկտեմբերին գերակատարվել են մոտ 11.4 մլրդ դրամով՝ ծրագրով նախատեսված 44.5 մլրդ դրամի փոխարեն կազմելով 55.8 մլրդ դրամ: Արդյունքում բյուջեի պակասուրդը կազմել է 9.3 մլրդ դրամ՝ ծրագրված 1.6 մլրդ դրամի փոխարեն: Պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներն ունեցել են հետևյալ կառուցվածքը. արժեթղթերի տեղաբաշխումից ստացված զուտ մուտքերը կազմել են -3.6 մլրդ դրամ, իսկ ՀՀ կենտրոնական բանկում ՀՀ կառավարության միջոցների փոփոխությունը՝ 12.9 մլրդ դրամ: Ընդ որում, ամսվա ընթացքում ՀՀ կառավարության ավանդները մարվել են 28.9 մլրդ դրամի չափով, իսկ Գանձապետարանի միասնական հաշվում պետբյուջեի միջոցներն ավելացել են 16 մլրդ դրամով:

Դրամավարկային քաղաքականություն

Դրամավարկային քաղաքականության կարճաժամկետ ծրագրման դեկտեմբերի սցենարով նախատեսվում էր փողի բազան ավելացնել ավելի քան 2.8 մլրդ դրամով՝ տարեվերջին հասցնելով 194.0 մլրդ դրամի:

Փաստացի արդյունքներով փողի բազան տարեվերջին կազմել է 200.6 մլրդ դրամ՝ ամսվա ընթացքում ավելանալով 19.2 մլրդ դրամով: Տատանումների թույլատրելի միջակայքի վերին սահմանի զգալի գերազանցումը պայմանավորված է տարվա վերջին օրերին Կառավարության կողմից իրականացված մեծածավալ ծախսումներով: Արդյունքում՝ ԿԲ հանդեպ Կառավարության պարտավորությունների ցուցանիշն աճել է 13.5 մլրդ դրամով:

ԿԲ ՁՆԱ-ի կառուցվածքում Կառավարության պարտավորությունների ցուցանիշի ընդլայնողական ազդեցությունը որոշ չափով չեզոքացվել է մյուս երկու տարրերի նվազմամբ: Այսպես, ԿԲ հանդեպ բանկերի պարտավորությունները նվազել են 2.9 մլրդ, իսկ զուտ այլ ակտիվները՝ 2.2 մլրդ դրամով:

Դեկտեմբերին, բյուջետային մեծածավալ ծախսումներին զուգահեռ, ԿԲ գործիքակազմում պահպանվել է մշտական հնարավորության ավանդային գործիքի ակտիվությունը (14.3 մլրդ դրամ համախառն ծավալ), ինչի միջոցով բանկերը լուծել են իրացվելիության ավելցուկի տեղաբաշխման իրենց կարճաժամկետ խնդիրները: Միաժամանակ, իրացվելիության ավելցուկի ներքաշման նպատակով դեկտեմբերին տեղաբաշխվել է 3.8 մլրդ դրամ զուտ ծավալով ԿԲ արժեթուղթ:

Կառուցվածքային վերոնշյալ փոփոխությունների արդյունքում ԿԲ ՁՆԱ-ն աճել է 4.6 մլրդ դրամով:

Դեկտեմբերին փողի բազայի ընդլայնման գերակշիռ մասը տեղի է ունեցել ԿԲ ՁԱԱ-ի համալրման հաշվին (14.6 մլրդ դրամ)՝ հիմնականում պայմանավորված Կառավարության կողմից 6.5 մլրդ դրամ ծավալով դրամաշնորհների ստացմամբ, Կենտրոնական բանկում՝ բանկերի արտարժույթով թղթակցային հաշիվների 2.9 մլրդ դրամով համալրմամբ, շուկայից շուրջ 1.9 մլրդ դրամին համարժեք արտարժույթի գնմամբ և 3.9 մլրդ դրամին համարժեք այլ արտարժութային մուտքերով: Միաժամանակ իրականացվել է 580 մլն դրամին համարժեք արտաքին պարտքի սպասարկում:

Փողի պահանջարկի տարեվերջի սեզոնայնությամբ պայմանավորված՝ փողի բազայի կառուցվածքում աճի հիմնական մասը բաժին է ընկել ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկին (16.1 մլրդ դրամ), ինչն ուղեկցվել է դրամով թղթակցային հաշիվների 330 մլն և արտարժույթով թղթակցային հաշիվների 2.9 մլրդ դրամ աճով:

Փողի զանգվածը (առանց կուտակված տոկոսների) դեկտեմբերին աճել է 28.4 մլրդ դրամով և ամսվա վերջին կազմել 364.6 մլրդ դրամ: Փողի պահանջարկի աճը՝ պայմանավորված սեզոնային գործոնով, դրսևորվել է մեծամասամբ շրջանառությունում գտնվող կանխիկի՝ 14.3 մլրդ դրամով ավելացմամբ, ինչն ուղեկցվել է նաև դրամային ավանդների 8.3 մլրդ դրամի աճով: Ընդ որում, վերջինիս հիմնական մասը բաժին է ընկել ցպահանջ ավանդներին (7.4 մլրդ դրամ): Արդյունքում, դրամային զանգվածն ավելացել է 22.6 մլրդ դրամով և կազմել 224.5 մլրդ դրամ: Արտարժութային ավանդներն ավելացել են 5.8 մլրդ դրամով՝ ամբողջությամբ (6.4 մլրդ դրամ) պայմանավորված ժամկետային ավանդների աճով:

Շրջանառությունում գտնվող կանխիկի աճի ազդեցությամբ ժամանակաշրջանի վերջի դրությամբ փողի բազմարկիչը նվազել է՝ նախորդ ամսվա 1.85-ից հասնելով

1.82-ի: Դրամային բազմարկչի պարագայում կանխիկի ազդեցությունը չեզոքացվել է դրամային ավանդների աճով, ինչի արդյունքում էլ դիտվել է այդ ցուցանիշի աճ՝ նախորդ ամսվա 1.11-ի փոխարեն դեկտեմբերին կազմելով 1.12:

Դեկտեմբերին ՊՊ եկամտաբերության կորի գրեթե ողջ երկայնքով նկատվել է պետական պարտատոմսերի տոկոսադրույքների որոշակի աճ: Եկամտաբերության կորի դիրքի փոփոխության գերակշիռ մասը պայմանավորված էր կորի մակարդակի զուգահեռ տեղաշարժով, որը կազմել է 0.4 տոկոսային կետ՝ ի հաշիվ եկամտաբերությունների աճի, ընդ որում՝ կարճաժամկետ և միջնաժամկետ հատվածներում տոկոսադրույքներն ավելացել են 0.08 և 1.22 տոկոսային կետով՝ կազմելով համապատասխանաբար 3.66% և 7%, իսկ երկարաժամկետ հատվածում տոկոսադրույքները գրեթե չեն փոփոխվել:

Միջբանկային ռեպո շուկայում նախորդ ամսվա համեմատ գործարքների ծավալը ավելացել է 128%-ով, իսկ գործարքների միջին եկամտաբերությունը՝ 2.2 տոկոսային կետով՝ կազմելով 5.11%, միջին ամսական ժամկետայնությունը կազմել է 8 օր:

2005 թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ դրամի անվանական միջին հաշվարկային փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 457.7 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ արժեքավորվելով 14.2 %-ով: Դեկտեմբերին ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքը կազմել է 449.4 դրամ՝ նախորդ ամսվա համեմատությամբ արժեքավորվելով 1.9%-ով: 2005 թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ դրամի անվանական միջին հաշվարկային փոխարժեքը եվրոյի նկատմամբ կազմել է 570.4 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ արժևորվելով 13.9%-ով: Դեկտեմբերին եվրոյի միջին փոխարժեքը կազմել է 532.7 դրամ՝ նախորդ ամսվա համեմատությամբ արժևորվելով 1.5 %-ով:

Արտարժույթի շուկայում դեկտեմբերին իրականացվել են 394 մլն ԱՄՆ դոլար գումարի համախառն գործառնություններ՝ նախորդ ամսվա համեմատ աճելով 45%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 30.88%-ով: Դեկտեմբերին նոյեմբերի համեմատությամբ տեղի է ունեցել դրամի արժևորում 2.14%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արժևորումը կազմել է 3.63%: Արտարժույթի շուկայում Կենտրոնական բանկը գնել է 4 մլն 150 հազար ԱՄՆ դոլար՝ 448.23 դրամ միջին կշռված փոխարժեքով:

ՀՀ ԿԲ խորհուրդը ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքը սահմանել է 3.5%, իսկ լոմբարդային վարկերինը և ներգրավվող ավանդներինը թողել է անփոփոխ (16%, 1%): Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը դեկտեմբերին սահմանվել է 16%:

I. Իրական հատված

Ամվանում	*Հունվար – նոյեմբեր*	*2005թ. հունվար – նոյեմբերի իրական աճի ինդեքսը 2004թ. հունվար – նոյեմբերի նկատմամբ (%)*	*Հունվար-դեկտեմբեր*	*2005թ. հունվար-դեկտեմբերի իրական աճի ինդեքսը 2004թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ (%)*
Համախառն ներքին արդյունք *(մլն ՀՀ դրամ)*	1920654.9	113.5	2228027.5	113.9
ՀՆԱ դեֆլյատոր *(%. ածողական)*	-	103.9	-	103.1
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար ՀՀ դրամ. ածողական)* [1]	1736.3	111.1	2015.8	114.7
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	584801.1	106.8	651393.0	107.5
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	5706.6	106.2	6316.5	104.8
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն ՀՀ դրամ)*	408975.3	110.9	493017.9	111.2
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	740320.3	109.0	886198.7	109.3
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	361621.8	132.7	426399.4	134.2
Բնակչության դրամական եկամուտները *(մլն ՀՀ դրամ)*	1233193	114.6 [1]	1454879.6	114.2 [1]
Բնակչության դրամական ծախսերը *(մլն ՀՀ դրամ)*	1199542	110.9 [1]	1405138.6	111.1 [1]
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	50856	123.1	52040 [2]	118.7 [2]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1205.0	-	1203.3	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	98.8	-	98.0	-
Գործազրկության մակարդակը *(%)*	8.2	-	8.1	-

II. Արտաքին հատված

Ամվանում	*Հունվար-նոյեմբեր (մլն ԱՄՆ դոլար)*	*2005թ. հունվար-նոյեմբերը 2004թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ (%)*	*Հունվար-դեկտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)*	*2005թ. հունվար-դեկտեմբերը 2004թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	867.4	134.2	950.4	131.5
Ներմուծում *(ՍԻՖ)*	1581.6	130.2	1767.9	130.9
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	714.2	126.1	817.6	130.2

III. Գների ինդեքսներ

Ժամանակաշրջան	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	105.4	100.5	100.7	98.2
Փետրվար	99.3	94.8	99.9	98.4
Մարտ	99.1	101.2	122.9	99.6
Ապրիլ	99.1	97.4	99.9	97.3
Մայիս	100.1	99.9	100.0	97.6
Հունիս	98.6	101.8	100.1	79.3
Հուլիս	95.5	96.3	100.1	81.8
Օգոստոս	98.6	102.4	101.0	88.0
Սեպտեմբեր	100.9	101.1	99.9	98.1
Հոկտեմբեր	100.1	98.2	100.9	102.4
Նոյեմբեր	101.1	100.8	91.1	102.5
Դեկտեմբեր	102.3	101.8	100.0	103.1
2005 թ. հունվար – դեկտեմբերը 2004 թ. հունվար – դեկտեմբերի համեմատությամբ	100.6	107.7	118.5	90.7

** Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների:*

IV. Գնաճ

ժամանակաշրջան	*2003*	*2004*	*2005*	*2005*
	նախորդ ամսվա նկատմամբ (%)			*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	4.1	2.5	5.4	5.4
Փետրվար	-1.5	-0.6	-0.7	4.7
Մարտ	-0.5	0.3	-0.9	3.7
Ապրիլ	2.0	1.2	-0.9	2.8
Մայիս	1.2	1.1	0.1	2.9
Հունիս	1.4	-0.1	-1.4	1.4
Հուլիս	-5.5	-2.5	-4.5	-3.1
Օգոստոս	-2.3	-2.4	-1.4	-4.5
Սեպտեմբեր	2.5	-0.7	0.9	-3.6
Հոկտեմբեր	-0.1	0.1	0.1	-3.5
Նոյեմբեր	2.2	0.8	1.1	-2.4
Դեկտեմբեր	5.2	2.3	2.3	-0.2
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	8.6	2.0		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	4.7	7.0		

V. Բնակառնո գնաճ[1]

Ցուցանիշ	**2003**	**2004**	**2005**
	նախորդ ամսվա նկատմամբ (%)		
Հունվար	0.69	0.65	0.71
Փետրվար	-0.46	0.05	-0.37
Մարտ	0.00	0.03	-0.26
Ապրիլ	0.23	0.05	-0.26
Մայիս	0.06	0.04	-0.08
Հունիս	0.61	-0.13	-0.10
Հուլիս	-0.55	-0.50	-0.42
Օգոստոս	-0.18	-0.31	-0.28
Սեպտեմբեր	1.20	-0.30	0.29
Հոկտեմբեր	0.04	-0.16	0.03
Նոյեմբեր	0.94	-0.05	0.17
Դեկտեմբեր	2.07	0.30	0.29
	նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)		
Հունվար	1.16	4.45	0.72
Փետրվար	0.86	5.60	1.07
Մարտ	1.04	6.37	0.71
Ապրիլ	0.37	6.39	0.13
Մայիս	0.49	6.23	-0.74
Հունիս	2.44	5.41	-0.57
Հուլիս	2.26	6.71	-0.78
Օգոստոս	2.61	6.90	-0.52
Սեպտեմբեր	5.33	6.02	0.26
Հոկտեմբեր	4.65	5.67	0.32
Նոյեմբեր	4.23	4.39	0.47
Դեկտեմբեր	4.67	0.55	0.52

VI. Բնակառնո գնաճին առավելագույն նպաստող 10 ապրանքատեսակները[1]

Անվանում	***Նպաստումը բնակառնո գնաճին, տոկոսային կետ***
	նախորդ ամսվա նկատմամբ
Բնակառնո գնաճ. *այդ թվում՝*	**0.29**
տավարի միս	0.11
թռչնի միս	0.02
մածուն	0.01
հեղուկ գազ	0.01
ծխախոտ «Կոսմոս»	0.01
շաքարավազ	0.01
հաց առաջին տեսակի	0.01
պանիր «Չանախ»	0.01
վճարովի ԲՈՒՀ	0.01
առողջարանների ուղեգրեր	0.01

[1] *Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների:*
[2] *Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների:*

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ [1]

(մլն ՀՀ դրամ)

Ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ			Կառավարության ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ[2]	Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ (կուտակման սկզբունքով)[3]
	պետական կարճաժամկետ պարտատոմսեր	պետական արժե-կտրոնային պարտատոմսեր	ընդամենը	կենտրոն. կառավ. հաշիվներ և ավանդներ դրամով	կենտրոն. կառավ. հաշիվներ արտարժ.	ՕՀԳ-երի միջոցներ դրամով	ՕՀԳ-երի միջոցներ արտարժույթով	ընդամենը		
2004										
Դեկտեմբեր [4]	193	5711	5904	42512	126	0	97	42735	**-36830**	***-36815***
2005										
Հունվար	193	5658	5852	63919	124	0	97	64141	**-58289**	***-58268***
Փետրվար	193	5598	5792	64629	122	0	98	64849	**-59057**	***-59162***
Մարտ [4]	193	5526	5719	65220	119	90	99	65528	**-59809**	***-60054***
Ապրիլ	193	6783	6977	71670	114	35	98	71917	**-64941**	***-65255***
Մայիս	193	6543	6736	67461	115	29	100	67706	**-60969**	***-61476***
Հունիս [4]	135	6402	6537	60819	115	29	108	61071	**-54534**	***-55050***
Հուլիս	135	6321	6456	54990	116	29	110	55245	**-48789**	***-49300***
Օգոստոս	135	6185	6320	55834	121	156	115	56227	**-49907**	***-50540***
Սեպտեմբեր [4]	0	5986	5986	53887	118	156	109	54270	**-48284**	***-48864***
Հոկտեմբեր	0	5821	5821	43477	120	156	111	43864	**-38043**	***-38713***
Նոյեմբեր	0	5747	5747	36293	119	123	111	36646	**-30899**	***-31558***
Դեկտեմբեր	0	5573	5573	21935	865	27	112	22939	**-17366**	***-17294***


[1] Ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով՝ հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:

[2] Կառավարության նկատմամբ պահանջների և Կառավարության ավանդների տարբերությունը:

[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:

[4] Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:


Կառավարության զուտ պարտավորությունները Կենտրոնական բանկի նկատմամբ



ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ[1]

(մլն ՀՀ դրամ)

Ժամկետ	Առևտրային բանկերի պարտավորությունները Կառավարության նկատմամբ[2]	ԿԲ պարտավորությունները Կառավարության նկատմամբ[3]	Ընդամենը
2004			
Դեկտեմբեր	12221	42735	54956
2005			
Հունվար	15029	64141	79170
Փետրվար	17396	64849	82245
Մարտ	15408	65528	80936
Ապրիլ	15917	71917	87834
Մայիս	17012	67706	84718
Հունիս	17327	61071	78398
Հուլիս	16754	55245	72000
Օգոստոս	18384	56227	74611
Սեպտեմբեր	17318	54270	71588
Հոկտեմբեր	17641	43864	61505
Նոյեմբեր	17336	36646	53982
Դեկտեմբեր	16438	22939	39377



[1] *Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ: Ներկայացված տվյալները հաշիվների մնացորդներն են ժամանակաշրջանի վերջի դրությամբ:*

[2] *Ընդգրկված են առևտրային բանկերի ցպահանջ և ժամկետային պարտավորությունները Գանձապետարանի, ինչպես նաև ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ:*

[3] *Ընդգրկված են հանրապետական բյուջեի և ՕԻԳ-երի միջոցները:*

ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 04 [4]	Հ - 05	Փ - 05	Մ - 05 [4]	Ա - 05	Մ - 05	Հ - 05 [4]	Հ - 05	Օ - 05	Ս - 05 [4]	Հ - 05	Ն - 05	Դ - 05
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)													
ՀՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1,2]	***149266***	***160018***	***165260***	***171489***	***180578***	***182491***	***201173***	***216726***	***232366***	***227142***	***225262***	***222953***	***237579***
ՀՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-17216***	***-42573***	***-48403***	***-47871***	***-50196***	***-44718***	***-50354***	***-47115***	***-50546***	***-53320***	***-44898***	***-41628***	***-37006***
Կառավարություն	-36830	-58289	-59057	-59809	-64941	-60969	-54534	-48789	-49907	-48284	-38043	-30899	-17366
Բանկեր	10857	9653	5100	5064	8339	8192	2882	4127	9120	9696	6800	6900	4000
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	1157	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման սվոփ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Ավանդներ (-)	-2000	-700	-6600	-4100	-2000	-1500	-1300	-1550	-1300	-1300	-4900	-4800	-7700
Հակադարձ ռեպո (-)	0	-1347	0	-2536	-1361	-2008	-6470	-6023	-1280	-704	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման սվոփ (-)	0	0	0	0	0	0	-1049	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)							-3453	-6330	-9701	-13501	-13501	-17349	-21215
Զուտ այլ ակտիվներ	8757	6063	5554	6874	6406	8059	4751	3877	-58	-1231	-154	-280	-2425
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***129830***	***117152***	***119542***	***123374***	***129198***	***137449***	***153985***	***169682***	***180840***	***174922***	***178616***	***181847***	***195487***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***132050***	***117444***	***116857***	***123618***	***130382***	***137773***	***150819***	***169611***	***181820***	***173823***	***180365***	***181325***	***200573***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	105534	91268	92635	98827	105457	110017	113392	124414	133091	132210	137724	139185	155275
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	25800	25604	23700	23834	24338	27195	18102	20950	15721	20765	21821	21930	22258
Պարտադիր պահուստ. (արտարժույթով)							18773	23672	32417	20277	20035	19387	22278
Այլ հաշիվներ	716	572	521	957	586	561	552	574	592	571	786	823	762
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	561	529	507	588	578	561	552	571	557	569	786	721	650
Այլ հաշիվներ (արտարժույթով)	155	43	14	369	8	0	1	4	34	2	0	102	113
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)													
ՀՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		***10752***	***5242***	***6229***	***9089***	***1913***	***18682***	***15553***	***15640***	***-5224***	***-1880***	***-2309***	***14626***
ՀՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		***-25357***	***-5829***	***532***	***-2326***	***5478***	***-5636***	***3239***	***-3431***	***-2774***	***8422***	***3269***	***4622***
Կառավարություն	-	-21459	-768	-752	-5132	3972	6435	5745	-1118	1 623	10241	7144	13533
Բանկեր	-	-1204	-4553	-36	3275	-147	-5310	1246	4993	576	-2896	100	-2900
այդ թվում՝ ավանդներ (-)	-	-1300	5900	-2500	-2100	-500	-200	250	-250	0	3600	-100	2900
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր							3453	2877	3371	3800	0	3849	3866
Զուտ այլ ակտիվներ	-	-2694	-508	1320	-468	1653	-3309	-875	-3934	-1173	1077	-126	-2145
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]		***-12679***	***2390***	***3832***	***5824***	***8251***	***16536***	***15697***	***11158***	***-5918***	***3694***	***3230***	***13641***
ՓՈՂԻ ԲԱԶԱ		***-14606***	***-587***	***6761***	***6764***	***7391***	***13046***	***18792***	***12210***	***-7998***	***6543***	***960***	***19248***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-14265	1367	6192	6630	4560	3375	11022	8677	-882	5514	1461	16090
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	-	-196	-1904	134	505	2857	-9093	2848	-5230	5045	1055	109	328
Պարտադիր պահուստ. (արտարժույթով)							18773	4899	8745	-12140	-242	-648	2891
Այլ հաշիվներ	-	-144	-51	436	-371	-25	-9	22	17	-21	215	38	-61
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	-	-33	-21	81	-10	-17	-9	19	-13	11	217	-65	-71
Այլ հաշիվներ (արտարժույթով)	-	-112	-29	355	-361	-8	1	3	31	-32	-2	102	10
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)													
ՀՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		***7.2***	***3.3***	***3.8***	***5.3***	***1.1***	***10.2***	***7.7***	***7.2***	***-2.2***	***-0.8***	***-1.0***	***6.6***
ՀՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ		***-147.3***	***-13.7***	***1.1***	***-4.9***	***10.9***	***-12.6***	***6.4***	***-7.3***	***-5.5***	***15.8***	***7.3***	***11.1***
Կառավարություն	-	-58.3	-1.3	-1.3	-8.6	6.1	10.6	10.5	-2.3	3.3	21.2	18.8	43.8
Բանկեր	-	-11.1	-47.2	-0.7	64.7	-1.8	-64.8	43.2	121.0	6.3	-29.9	1.5	-42.0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր							100.0	83.3	53.3	39.2	0.0	28.5	22.3
Զուտ այլ ակտիվներ	-	-30.8	-8.4	23.8	-6.8	25.8	-41.0	-18.4	-101.5	-2025.9	87.5	-81.9	-765.6
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]		***-9.8***	***2.0***	***3.2***	***4.7***	***6.4***	***12.0***	***10.2***	***6.6***	***-3.3***	***2.1***	***1.8***	***7.5***
ՓՈՂԻ ԲԱԶԱ		***-11.1***	***-0.5***	***5.8***	***5.5***	***5.7***	***9.5***	***12.5***	***7.2***	***-4.4***	***3.8***	***0.5***	***10.6***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-13.5	1.5	6.7	6.7	4.3	3.1	9.7	7.0	-0.7	4.2	1.1	11.6
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	-	-0.8	-7.4	0.6	2.1	11.7	-33.4	15.7	-25.0	32.1	5.1	0.5	1.5
Պարտադիր պահուստ. (արտարժույթով)							100	26.1	36.9	-37.4	-1.2	-3.2	14.9
Այլ հաշիվներ	-	-20.2	-8.8	83.6	-38.8	-4.3	-1.6	4.0	3.0	-3.5	37.7	4.8	-7.4

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: ՋԱՀ-ն ընդգրկում են փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[2] ՋԱՀ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 485.84 դրամ, 1 ՀՓԻ = 1.5530 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.3608 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.9258 ԱՄՆ դոլար:

[3] Փողի բազան հաշվարկված է որպես տվյալ ամսվա վերջին օրվան նախորդող հինգ օրերի և հաջորդ ամսվա սկզբի հինգ օրերի միջինը:

[4] Ներառված են եզրափակիչ շրջանառության արդյունքները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 04	Հ – 05	Փ – 05	Մ –05	Ա - 05	Մ - 05	Հ - 05	Հ - 05	Օ - 05	Ս - 05	Հ - 05	Ն - 05	Դ - 05
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**55829**	**56969**	**53242**	**50846**	**44797**	**43228**	**35555**	**35784**	**35105**	**33656**	**30187**	**17923**	**18581**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	117646	117724	113184	107917	99969	101800	97621	102216	105176	97154	93341	84334	89532
Արտաքին պարտ. փոխարկելի արտարժույթով	-57154	-56395	-56223	-53699	-50917	-53614	-56815	-61003	-62465	-58130	-57236	-60500	-64663
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով	-4663	-4360	-3719	-3373	-4255	-4958	-5251	-5430	-7606	-5368	-5918	-5911	-6289
ԶՆԱ	**130829**	**130156**	**129619**	**135579**	**139351**	**144583**	**161895**	**173764**	**186444**	**175274**	**179004**	**188343**	**201899**
Կառավարություն	19598	20248	18730	24151	27842	28571	29458	29546	27867	29119	28411	24372	22529
Ջուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	20989	24849	25598	25777	22542	26514	44943	53884	57407	53376	57568	60185	71287
Պահուստային ակտիվներ	34083	36625	37449	37707	34319	38370	56874	65660	69261	65305	69345	72036	83187
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ	-13094	-11776	-11851	-11930	-11777	-11856	-11930	-11776	-11854	-11929	-11777	-11851	-11899
Տնտեսություն	142426	136997	136586	141043	143390	150247	154759	157621	167210	167247	172168	183136	188301
Ձեռնարկություններ	80113	75460	72354	73767	75828	78213	80799	81704	87143	86842	90689	98251	98612
Դրամով	27361	24391	24240	24542	26419	27473	28554	30423	33159	33931	35710	37922	41021
Արտարժույթով	49224	47601	48094	49206	49389	50721	52220	51256	53960	52886	54954	60304	57569
Արժեթղթեր	3529	3468	20	20	19	19	25	25	25	25	25	25	21
Տնային տնտեսություններ	56001	55202	57624	60323	62354	66074	68114	70021	74130	72845	74758	77548	83002
Դրամով	14325	13445	13999	15426	17122	18152	19618	21077	22651	24267	24537	25807	29388
Արտարժույթով	41676	41757	43625	44897	45232	47921	48496	48944	51479	48578	50220	51741	53614
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	42	46	31	29	38	44	48	53	52	292	93	98	141
Դրամով	25	25	22	19	23	29	32	38	36	237	38	41	86
Արտարժույթով	17	21	10	10	15	15	16	16	16	55	54	56	55
Այլ ֆինանսական կազմակերպություններ	6269	6289	6576	6924	5170	5916	5798	5842	5884	7268	6629	7239	6546
Դրամով	2042	1984	2522	3082	2019	3360	4266	4535	4106	5762	5035	5621	4945
Արտարժույթով	4227	4305	4054	3843	3152	2557	1532	1307	1778	1506	1594	1617	1602
Այլ ռեզիդենտներ[1]	0	0	1	0	0	0	0	0	0	0	0	0	0
Դրամով	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Արտարժույթով	0	0	1	0	0	0	0	0	0	0	0	0	0
Ջուտ այլ ակտիվներ	-52183	-51938	-51296	-55392	-54423	-60749	-67266	-67287	-66040	-74468	-79143	-79349	-80218
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	1836	1572	1604	1600	1289	1343	1478	1356	1456	1446	1565	1643	3477
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժ.	3052	2249	2279	1785	2804	2073	2366	2722	3309	3320	6099	3114	2136
Արտաքին պարտ. (ոչ փոխարկելի արտարժ.)	-799	-656	-857	-796	-1189	-887	-950	-1097	-1967	-1986	-3261	-1992	-386
Ներդրումներ փայաբաժիններում	445	445	445	457	459	470	478	493	500	498	506	514	517
Միջբանկային պահանջներ	6097	4139	3242	3721	10616	12318	6927	5496	6247	7369	6529	5025	5139
Այլ ակտիվներ	32887	33359	36639	39005	41313	42027	43286	44392	42296	39798	37999	38444	38692
Միջբանկային պարտավորություններ	-5530	-3617	-2793	-3265	-10156	-11498	-5738	-4897	-5785	-7081	-5646	-4439	-4569
Դրամական շուկայի գործիքներ	-3406	-3371	-3335	-3207	-3091	-3150	-3407	-3469	-334	-319	-1680	-1686	-519
Կապիտալ հաշիվներ	-68842	-68635	-70214	-73661	-76607	-79060	-80479	-82328	-85757	-89633	-90410	-91923	-98501
Այլ պարտավորություններ	-17924	-17423	-18305	-21031	-19861	-24386	-31227	-29954	-26006	-27879	-30843	-28049	26203
ԱՎԱՆԴՆԵՐ	**186659**	**187126**	**182861**	**186424**	**184148**	**187812**	**197450**	**209548**	**221549**	**208930**	**209191**	**206266**	**220480**
Դրամով ավանդներ	46588	47838	49712	53477	56067	58176	58632	65052	62927	66341	69017	71430	79836
Ցպահանջ ավանդներ	33283	32250	35629	36675	38203	40048	41257	47455	45105	47523	49046	49670	57095
Ժամկետային ավանդներ	13304	15588	14083	16802	17864	18127	17375	17597	17822	18818	19971	21759	22741
Ավանդներ արտարժույթով	140071	139288	133149	132947	128080	129636	138818	144496	158622	142589	140174	134836	140644
Ցպահանջ ավանդներ	74453	71481	66296	69120	64726	64956	74368	77817	87029	64980	62285	58896	58244
Ժամկետային ավանդներ	65618	67807	66853	63827	63354	64680	64450	66679	71593	77609	77889	75940	82401

[1] *Չդասակարգված պահանջներ: «Փողի զանգվածի կառուցվածքը» աղյուսակում սույն պահանջներն ընդգրկված են «Ձեռնարկություններ և կազմակերպություններ» տողում:*

ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 04 [5]	Հ - 05	Փ - 05	Մ - 05 [5]	Ա - 05	Մ - 05	Հ - 05 [5]	Հ - 05	Օ - 05	Ս – 05 [5]	Հ - 05	Ն - 05	Դ - 05
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)													
ՁՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1]	***205095***	***216987***	***218502***	***222334***	***225375***	***225720***	***236728***	***252510***	***267472***	***260798***	***255449***	***240876***	***256160***
ՁՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***80848***	***52841***	***49899***	***56461***	***57900***	***64680***	***66568***	***74175***	***78494***	***71645***	***82575***	***96241***	***109394***
Կառավարություն	-17232	-38041	-40327	-35659	-37099	-32398	-25076	-19243	-22040	-19165	-9632	-6527	5163
Տնտեսություն	142469	137037	136622	141075	143419	150274	154784	157644	167233	167271	172191	183158	188322
Չեռնարկ. և կազմակերպ.	80114	75460	72355	73767	75828	78213	80799	81704	87143	86842	90689	98251	98612
որից՝ կուտակված տոկոսներ	651	637	565	667	667	714	720	778	762	762	845	831	786
Տնային տնտեսություններ	56044	55241	57659	60354	62383	66100	68139	70045	74154	72868	74780	77570	83023
որից՝ կուտակված տոկոսներ	790	854	880	945	954	1057	1067	1144	1220	1097	1082	1042	1164
Շահույթ չհետաձգող կազմակերպություններ	42	46	31	29	38	44	48	53	52	292	93	98	141
որից՝ կուտակված տոկոսներ	0	0	0	0	0	0	0	0	0	1	1	1	1
Այլ ֆինանսական կազմակերպություններ	6269	6289	6576	6924	5170	5916	5798	5842	5884	7268	6629	7239	6546
որից՝ կուտակված տոկոսներ	48	36	36	42	27	28	22	16	14	16	17	17	20
Զուտ այլ ակտիվներ	-44388	-46154	-46395	-48955	-48420	-53196	-63140	-64226	-66699	-76461	-79984	-80390	-84092
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ [2]	***145538***	***130296***	***135012***	***145246***	***154908***	***160536***	***164245***	***181909***	***187022***	***189578***	***197526***	***201885***	***224485***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտակված տոկոսների)*	***285172***	***269000***	***267511***	***277883***	***282339***	***289595***	***302525***	***325786***	***345008***	***331547***	***337001***	***336197***	***364614***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ [3]	***285943***	***269828***	***268401***	***278796***	***283275***	***290399***	***303296***	***326685***	***345966***	***332443***	***338024***	***337117***	***365554***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	98569	82131	85019	91415	98541	102027	105294	116563	123825	122942	128048	130028	144311
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [4]	33845	32778	36136	37263	38781	40610	41809	48026	45662	48092	49832	50391	57745
կուտակված տոկոսներ	38	41	53	43	49	33	17	32	40	21	29	37	15
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	13304	15588	14083	16802	17864	18127	17375	17597	17822	18818	19971	21759	22741
կուտակված տոկոսներ	142	160	173	191	230	194	215	245	248	253	295	256	297
Արտարժույթով ավանդներ	140226	139331	133163	133316	128088	129636	138819	144499	158657	142591	140174	134938	140757
Ցպահանջ [4]	74607	71525	66310	69489	64733	64956	74369	77821	87064	64982	62285	58999	58356
կուտակված տոկոսներ	52	55	65	51	60	36	9	42	73	8	13	20	7
Ժամկետային	65618	67807	66853	63827	63354	64680	64450	66679	71593	77609	77889	75940	82401
կուտակված տոկոսներ	539	573	599	627	597	541	530	580	597	614	685	606	621
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)													
ՁՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***11892***	***1515***	***3832***	***3040***	***345***	***11008***	***15782***	***14962***	***-6674***	***-5349***	***-14573***	***15283***
ՁՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-28007***	***-2942***	***6562***	***1439***	***6780***	***1888***	***7607***	***4319***	***-6849***	***10930***	***13666***	***13153***
Կառավարություն	-	-20809	-2286	4668	-1440	4701	7322	5833	-2797	2875	9533	3105	11691
Տնտեսություն	-	-5432	-415	4453	2344	6855	4511	2860	9589	37	4920	10967	5164
Չեռնարկ. և կազմակերպ.	-	-4654	-3105	1413	2061	2385	2586	905	5439	-301	3847	7562	360
որից՝ կուտակված տոկոսներ	-	-15	-72	102	0	47	7	58	-16	0	83	-14	-45
Տնային տնտեսություններ	-	-802	2418	2695	2028	3718	2039	1906	4109	-1285	1912	2790	5453
որից՝ կուտակված տոկոսներ	-	64	25	65	10	102	10	77	76	-123	-14	-40	122
Շահույթ չհետաձգող կազմակերպություններ	-	4	-15	-3	9	6	4	5	-1	240	-200	5	43
որից՝ կուտակված տոկոսներ	-	0	0	0	0	0	0	0	0	1	0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	20	287	348	-1754	746	-118	44	42	1384	-639	610	-692
որից՝ կուտակված տոկոսներ	-	-12	0	6	-15	1	-6	-6	-2	3	1	0	3
Զուտ այլ ակտիվներ	-	-1766	-241	-2560	535	-4776	-9945	-1086	-2473	-9762	-3523	-406	-3702
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ	**-**	***-15242***	***4716***	***10234***	***9662***	***5628***	***3709***	***17664***	***5113***	***2556***	***7948***	***4360***	***22599***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտակված տոկոսների)*	**-**	***-16173***	***-1488***	***10372***	***4456***	***7256***	***12930***	***23261***	***19222***	***-13461***	***5454***	***-804***	***28417***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ	**-**	***-16115***	***-1427***	***10395***	***4479***	***7125***	***12897***	***23389***	***19281***	***-13523***	***5581***	***-907***	***28437***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-16438	2889	6395	7126	3486	3268	11269	7262	-883	5106	1980	14283
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	-	-1067	3358	1127	1518	1828	1199	6217	-2364	2430	1740	560	7353
կուտակված տոկոսներ	-	3	12	-10	6	-15	-16	15	8	-19	8	8	-22
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	2284	-1505	2720	1062	263	-753	222	225	996	1153	1789	982
կուտակված տոկոսներ	-	18	13	18	39	-35	21	30	3	5	42	-39	41
Արտարժույթով ավանդներ	-	-894	-6168	153	-5228	1548	9183	5680	14158	-16066	-2417	-5236	5819
Ցպահանջ	-	-3083	-5215	3179	-4755	222	9413	3452	9243	-22082	-2697	-3286	-643
կուտակված տոկոսներ	-	2	10	-13	9	-24	-27	33	31	-65	5	7	-14
Ժամկետային	-	2188	-953	-3027	-472	1326	-230	2229	4914	6016	280	-1950	6461
կուտակված տոկոսներ	-	34	26	28	-30	-56	-11	50	17	17	71	-79	15

(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)													
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***5.8***	***0.7***	***1.8***	***1.4***	***0.2***	***4.9***	***6.7***	***5.9***	***-2.5***	***-2.1***	***5.7***	***6.3***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-34.6***	***-5.6***	***13.2***	***2.5***	***11.7***	***2.9***	***11.4***	***5.8***	***-8.7***	***15.3***	***16.5***	***13.7***
Կառավարություն	-	-120.8	-6.0	11.6	-4.0	12.7	22.6	23.3	-14.5	13.0	49.7	32.2	179.1
Տնտեսություն	-	-3.8	-0.3	3.3	1.7	4.8	3.0	1.8	6.1	0.0	2.9	6.4	2.8
Չեռնարկ. և կազմակերպ.	-	-5.8	-4.1	2.0	2.8	3.1	3.3	1.1	6.7	-0.3	4.4	8.3	0.4
Տնային տնտեսություններ	-	-1.4	4.4	4.7	3.4	6.0	3.1	2.8	5.9	-1.7	2.6	3.7	7.0
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	10.0	-32.1	-8.1	31.0	16.6	8.6	11.4	-1.8	461.7	-68.4	5.6	44.1
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	0.3	4.6	5.3	-25.3	14.4	-2.0	0.8	0.7	23.5	-8.8	9.2	-9.6
Զուտ այլ ակտիվներ	-	-4.0	-0.5	-5.5	1.1	-9.9	-18.7	-1.7	3.8	-14.6	-4.6	-0.5	-4.6
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ	-	***-10.5***	***3.6***	***7.6***	***6.7***	***3.6***	***2.3***	***10.8***	***2.8***	***1.4***	***4.2***	***2.2***	***11.2***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտակված տոկոսների)*	-	***-5.7***	***-0.6***	***3.9***	***1.6***	***2.6***	***4.5***	***7.7***	***5.9***	***-3.9***	***1.6***	***-0.2***	***8.5***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ	-	***-5.6***	***-0.5***	***3.9***	***1.6***	***2.5***	***4.4***	***7.7***	***5.9***	***-3.9***	***1.7***	***-0.3***	***8.4***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-16.7	3.5	7.5	7.8	3.5	3.2	10.7	6.2	-0.7	4.2	1.5	11.0
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	-	-3.2	10.2	3.1	4.1	4.7	3.0	14.9	-4.9	5.3	3.6	1.1	14.6
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	17.2	-9.7	19.3	6.3	1.5	-4.2	1.3	1.3	5.6	6.1	9.0	4.5
Արտարժույթով ավանդներ	-	-0.6	-4.4	0.1	-3.9	1.2	7.1	4.1	9.8	-10.1	-1.7	-3.7	4.3
Ցպահանջ	-	-4.1	-7.3	4.8	-6.8	0.3	14.5	4.6	11.9	-25.4	-4.2	-5.3	-1.1
Ժամկետային	-	3.3	-1.4	-4.5	-0.7	2.1	-0.4	3.5	7.4	8.4	0.4	-2.5	8.5

[1] ԶԱՄ-ն ընդգրկում է միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱՄ-ն հաշվարկված է ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 485.84 դրամ, 1 ՀՓԻ = 1.5530 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.3608 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.9258 ԱՄՆ դոլար, առևտրային բանկերի ԶԱՄ-ն՝ փաստացի փոխարժեքներով:

[2] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ միայն դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները (առանց կուտակված տոկոսների):

[3] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները, արտարժութային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):

[4] Ընդգրկում են ռեզիդենտների հաշիվները և ցպահանջ ավանդները:

[5] Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]

(մլն ՀՀ դրամ)

ժամկետ	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1 [3]	ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2 [4]	Արտարժույթով ավանդներ	M2X [5]
2004							
Դեկտեմբեր	98569	33807	132376	13162	145538	139634	285172
2005							
Հունվար	82131	32738	114869	15428	130296	138703	269000
Փետրվար	85019	36083	121103	13910	135012	132499	267511
Մարտ	91415	37220	128635	16611	145246	132637	277883
Ապրիլ	98541	38733	137273	17635	154908	127431	282339
Մայիս	102027	40576	142603	17933	160536	129059	289595
Հունիս	105294	41791	147086	17160	164245	138280	302525
Հուլիս	116563	47994	164557	17352	181909	143877	325786
Օգոստոս	123825	45622	169448	17574	187022	157986	345008
Սեպտեմբեր	122942	48071	171013	18565	189578	141969	331547
Հոկտեմբեր	128048	49802	177850	19676	197526	139476	337001
Նոյեմբեր	130028	50354	180382	21503	201885	134312	336197
Դեկտեմբեր	144311	57730	202041	22444	224485	140129	364614


ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ [2]

(մլն ՀՀ դրամ)


ժամկետ	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1 [3]	ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2 [4]	Արտարժույթով ավանդներ	M2X [5]
2004							
Դեկտեմբեր	98569	33845	132414	13304	145718	140226	285943
2005							
Հունվար	82131	32778	114909	15588	130497	139331	269828
Փետրվար	85019	36136	121156	14083	135238	133163	268401
Մարտ	91415	37263	128678	16802	145480	133316	278796
Ապրիլ	98541	38781	137322	17864	155187	128088	283275
Մայիս	102027	40610	142636	18127	160764	129636	290399
Հունիս	105294	41809	147103	17375	164477	138819	303296
Հուլիս	116563	48026	164589	17597	182186	144499	326685
Օգոստոս	123825	45662	169487	17822	187309	158657	345966
Սեպտեմբեր	122942	48092	171034	18818	189852	142591	332443
Հոկտեմբեր	128048	49832	177879	19971	197850	140174	338024
Նոյեմբեր	130028	50391	180419	21759	202179	134938	337117
Դեկտեմբեր	144311	57745	202056	22741	224797	140757	365554

[1] Ավանդների մեջ կուտակված տոկոսները ընդգրկված չեն:
[2] Ավանդների մեջ կուտակված տոկոսները ընդգրկված են:
[3] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ դրամը և ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները):
[4] M2-ը դրամային զանգվածն է. ընդգրկում է M1-ը և դրամով ժամկետային ավանդները:
[5] M2X-ը փողի զանգվածն է. ընդգրկում է M2-ը և արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները):


Փողի բազան տատանումների թույլատրելի միջակայքում




Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի




Փողի զանգվածի կառուցվածքը




Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում




Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում



Փողի բազայի ամսական փոփոխությունը և ամսական գնաճը



Փողի զանգվածի ամսական փոփոխությունը և ամսական գնաճը




ՄԵՋՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]

(մլն ՀՀ դրամ)


ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2004					
Դեկտեմբեր	118742	87328	120859	135356	274203
2005					
Հունվար	116919	80711	112024	127674	264176
Փետրվար	120171	86956	124686	137967	272280
Մարտ	127999	93709	133916	149487	281344
Ապրիլ	134550	102563	143076	159872	292963
Մայիս	141412	106066	146487	163066	296774
Հունիս	157781	109642	152672	169249	310411
Հուլիս	169397	115789	164112	182292	326824
Օգոստոս	180545	123023	167144	185886	339884
Սեպտեմբեր	171543	122824	167074	186183	324828
Հոկտեմբեր	177642	127140	176649	196601	333857
Նոյեմբեր	179684	130537	179611	201240	331097
Դեկտեմբեր	180359	127854	184476	209069	351492

[1] *Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:*
Հարթեցման մեթոդիկան նկարագրված է «ՀՀ կենտրոնական բանկի բանբերի» 2001 թ. 2-րդ եռամսյակի համարում հրապարակված «ՀՀ փողի ագրեգատների թվային շարքերի հարթեցումներ» նյութում:
Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են, քանի որ նոր տվյալների ի հայտ գալուն զուգահեռ համապատասխան ամիսների սեզոնայնության գործակիցները փոխվում են: Այդ իսկ պատճառով «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամյա պարբերականի յուրաքանչյուր տարվա առաջին համարում հրապարակվում են փողի ագրեգատների սեզոնայնորեն հարթեցված նոր շարքերը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները




Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի և հարթեցված մակարդակները



Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները




Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ[1]

(մլն ՀՀ դրամ)

Ցուցանիշներ	2004	2005												
	Դ[3]	Հ	Փ	Մ[3]	Ա	Մ	Հ[3]	Հ	Օ	Ս[3]	Հ	Ն	Դ
Կենտրոնական բանկի ԶԱԱ	149266	160018	165260	171489	180578	182491	201173	216726	232366	227142	225262	222953	237579
Առևտրային բանկերի ԶԱԱ	55829	56969	53242	50846	44797	43228	35555	35784	35105	33656	30187	17923	18581
Ընդամենը	205095	216987	218502	222334	225375	225720	236728	252510	267472	260798	255449	240876	256160
Կենտրոնական բանկի ԶԱԱ [2]	***150341***	***161160***	***166382***	***172394***	***181915***	***184411***	***203236***	***219505***	***235564***	***230404***	***228758***	***227148***	***241229***



[1] *ԶԱԱ-ն ընդգրկում է փոխարկելի արտարժույթով արտաքին ակտիվները և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունները: Կենտրոնական բանկի ԶԱԱ-ն հաշվարկված է ծրագրային փոխարժեքներով, առևտրային բանկերի ԶԱԱ-ն՝ փաստացի փոխարժեքներով:*

[2] *Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:*

[3] *Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:*

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ-04	Հ-05	Փ-05	Մ-05	Ա-05	Մ-05	Հ-05	Հ-05	Օ-05	Ս-05	Հ-05	Ն-05	Դ-05
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթ)	**-983**	**-1101**	**-943**	**-851**	**-853**	**-1481**	**-1588**	**-1558**	**-1631**	**-1585**	**-1584**	**-1636**	**-1787**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	331	229	119	160	168	209	247	146	166	125	157	87	156
Արտաքին պարտավորություններ փոխ. արտարժ.	-1314	-1329	-1062	-1010	-1021	-1691	-1835	-1704	-1797	-1710	-1742	-1714	-1943
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-9	-
ԶՆԱ	**1373**	**1451**	**1373**	**1280**	**1308**	**2036**	**2100**	**2141**	**2260**	**2241**	**2331**	**2391**	**2643**
Կառավարություն	-107	-103	-102	-99	-96	-97	-83	-83	-85	-81	-13	-13	-14
Ջուտ պահանջներ առևտրային բանկերին	1059	1157	1001	756	612	899	879	1290	1425	1385	1195	1112	1061
Պահանջներ առևտրային բանկերին	1363	1459	1301	1052	922	1139	1172	1529	1663	1654	1483	1373	1296
Պարտավորություններ առևտրային բանկերի նկատմամբ	-304	-302	-300	-296	-310	-240	-292	-239	-238	-269	-288	-261	-235
Տնտեսություն	3622	3494	3829	3997	4077	4380	4607	4934	5180	5252	5667	5735	6236
Չեռնարկություններ	1815	1581	1688	1697	1699	1924	2183	2367	2611	2667	2901	2989	3177
Դրամով	773	557	550	543	537	552	636	664	648	821	859	938	1044
Արտարժույթով	1042	1025	1138	1154	1163	1372	1547	1703	1963	1846	2043	2051	2133
